ՀՀ Կենտրոնական բանկի
վեբ կայքի օգտագործողի ձեռնարկ
(հաշվետվություն ուղարկող օգտագործողների համար)

Հարգելի օգտագործողներ,

Ձեր կողմից ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները փոխանցման ընթացքում ապօրենի ընթերցումից պաշտպանելու նպատակով ՀՀ Կենտրոնական բանկի տնային էջը ենթարկվել է որոշակի փոփոխությունների:

Այսուհետ, այն էջը, որտեղից դուք ուղարկում եք ձեր հաշվետվությունները կունենա հետեևյալ հասցեն՝

https://report.cba.am/login.aspx?ReturnUrl=%2findex.aspx

և հետևյալ տեսքը՝



նկ.1

Առաջին անգամ այդ էջին դիմելուց, դուք ձեր էկրանին կարող եք տեսնել զգուշացնող հաղորդագրություն, որի տեսքը կախված է նրանից, թե ինչ դիտարկիչ եք դուք օգտագործում ինտերնետ մուտք գործելու համար:

Ստորև բերված են տարբեր դիտարկիչների արձագանքները և ձեր պատասխան գործողությունները:

1. MS Internet Explorer դիտարկիչ օգտագործելու դեպքում, էկրանին հայտնված «Security Alert» պատուհանում անհրաժեշտ է սեղմել «Yes» կոճակը (նկ.2):



Այնուհետև, հավաքելով ձեր նույնացման տվյալները (անվանումը և գաղտնաբառը), կարող եք ուղարկել հաշվետվությունը:

2. Opera դիտարկիչ օգտագործելու դեպքում էկրանին հայտնված «Security Issue» պատուհանում անհրաժեշտ է սեղմել «Approve» կոճակը (նկ. 3) և, հավաքելով նույնացման տվյալները (անվանումը և գաղտնաբառը), ուղարկել հաշվետվությունը:



3. Mozilla Firefox դիտարկիչ (browser) օգտագործելու դեպքում էկրանին հայտնված «Secure Connection Failed» պատուհանում անհրաժեշտ է սեղմել «Or you can add an exception» տողը (նկ.4), այնուհետև, էկրանին հայտնված «Add Exception» կոճակը (նկ.5):



Նկ.4



Նկ.5

Որից հետո էկրանին հայտված «Add Security Exception» պատուհանում անհրաժեշտ է սեղմել Get Certificate կոճակը, այնուհետև «Confirm Security Exception» կոճակը (նկ.6):



Այնուհետև, հավաքելով նույնացման տվյալները (անվանումը և գաղտնաբառը), ուղարկել հաշվետվությունը: